ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
13.01.2023թ. թիվ 2/7-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ

ք. Երևան, 2023

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կողմից հավակնորդների փաստաբանական գործունեության արտոնագիր **(այսուհետ՝ արտոնագիր)** և փաստաբանի վկայական **(այսուհետ՝ վկայական)** տրամադրելու, ինչպես նաև փաստաբանի օգնականի արտոնագրման հետ կապված հարաբերությունները:

2. Արտոնագիրը և վկայականը տրամադրվում է Պալատի անդամ դառնալու և արտոնագիր ստանալու մասին դիմումի **(այսուհետ՝ արտոնագիր ստանալու դիմում)** և Պալատի խորհրդի որոշման հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով երդում տալուց հետո:

3. Արտոնագրի և վկայականի տպագրությունը նախապես կազմակերպում է Պալատի աշխատակազմի ղեկավարը:

II. ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԸ

4. Արտոնագիրն ունի հերթական համար, որը հետագայում չի կարող փոփոխվել:

5. Արտոնագրի հերթական համարը տրամադրվում է այբբենական կարգով՝ հավակնորդների ազգանվան հերթականությամբ:

6. Արտոնագիրը տպագրվում է A5 ձևաչափի անթափանց թղթի վրա՝ 148 մմ լայնությամբ և 210 մմ երկարությամբ:

7. Արտոնագիրը պարունակում է հետևյալ տեղեկությունները

1) Պալատի խորհրդանիշը,
2) Պալատի լրիվ անվանումը,
3) փաստաբանական գործունեության արտոնագրի հերթական համարը,
4) փաստաբանի անունը, ազգանունը և հայրանունը:
5) տրման ժամանակահատվածը,
6) տրման ամսաթիվը,
7) Պալատի նախագահի ստորագրությունը,
8) Պալատի կնիքը:

8. Արտոնագրի մեջ սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկությունները գրառվում են երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

9. Վկայականը պատրաստվում է կաշենման պատյանից՝ 65 մմ լայնությամբ և 196 մմ երկարությամբ (բացված վիճակում):

10. Վկայականի դիմերեսի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը և գրառված է Պալատի լրիվ անվանումը:

11. Վկայականի դարձերեսի վրա մեջտեղի մասում պատկերված է Պալատի խորհրդանշանը, իսկ դրա վերին և ստորին մասերում նշվում է Պալատի կրճատ անվանումը՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

12. Փաստաբանի վկայականն ունի երկու կողմ (աջ և ձախ):

13. Վկայականի ձախ կողմում փակցվում է փաստաբանի 30 մմ x 40 մմ չափի գունավոր լուսանկարը: Լուսանկարից աջ մասում նշվում են՝ Պալատի կրճատ անվանումը, վկայականի համարը, փաստաբանի անունը և ազգանունը, տրման ժամկետը, նախագահի անունը, ազգանունը և ստորագրությունը:

14. Վկայականի աջ մասում նշվում են փաստաբանի վերաբերյալ տեղեկություններ՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

15. Վկայականի աջ մասի մեջտեղում արտացոլվում է Պալատի խորհրդանշանը:

16. Վկայականի աջ և ձախ կողմերը կնքվում են Պալատի կնիքով: Վկայականի ձախ մասում կնիքը դրվում է այնպես, որ կիսով չափ ընդգրկի նաև լուսանկարը:

17. Արտոնագրի կամ վկայականի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում փաստաբանի գրավոր դիմումի հիման վրա Պալատը տրամադրում է արտոնագրի կամ վկայականի կրկնօրինակ: Դիմումին կից ներկայացվում է օգտագործման համար ոչ պիտանի դարձած արտոնագիրը կամ վկայականը: Կորած կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձած արտոնագրի և/կամ վկայականի փոխարեն տրվում են նոր արտոնագիր և/կամ նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշումով:

18. Առաջին անգամ արտոնագիր և վկայական տրամադրելու դեպքում փաստաբանից լրացուցիչ վճար չի գանձվում:

19. Արտոնագրի և վկայականի կրկնօրինակի տրամադրման համար փաստաբանից գանձվում է վճար՝ վկայականի արժեքի չափով:

20. Պալատի նախագահի որոշմամբ կարող է սահմանվել արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի **(այսուհետ՝ Պլաստիկ քարտ)** ձևը և նկարագրությունը: Պլաստիկ քարտը փաստաբանին տրամադրվում է կամավորության սկզբունքով: Պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:

21. Պլաստիկ քարտը փաստաբանին տրամադրվում է միայն դիմումի հիման վրա՝ քարտի արժեքի փոխհատուցմամբ, բացառությամբ սույն կետում նշված դեպքերի: Առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու մասին դիմում ներկայացրած փաստաբանի հավակնորդին Պլաստիկ քարտը տրամադրվում է անվճար:

22. Պլաստիկ քարտը փաստաբանին, որպես կանոն, տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Բացառիկ դեպքերում, Պլաստիկ քարտի տպագրության հետ կապված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ Պլաստիկ քարտի տրամադրման՝ սույն կետում նշված ժամկետը կարող է երկարաձգվել:

23. Պլաստիկ քարտի տպագրությունն ապահովում է Պալատի հետ համապատասխան պայմանագրի հիման վրա համագործակցող մասնագիտացված կազմակերպությունը **(այսուհետ՝ Կազմակերպություն)**:

Պլաստիկ քարտի արժեքը որոշվում է Պալատի և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով: Ընդ որում՝ պայմանագրով, հաշվի առնելով քարտի տպագրության ծախսերը, կարող են սահմանվել տարբեր սակագներ՝ քարտի անհատական և խմբային պատվերների համար: Փաստաբանը Պլաստիկ քարտի արժեքն անմիջապես վճարում է Կազմակերպությանը:

Պլաստիկ քարտի տրամադրման դիմումին կից փաստաբանը պետք է էլեկտրոնային

կրիչով ներկայացնի 30X25 մմ չափսերից ոչ պակաս գունավոր լուսանկար, իսկ հետագայում՝ նաև Կազմակերպությանը Պլաստիկ քարտի արժեքը վճարելու վերաբերյալ համապատասխան հաշվարկային փաստաթղթի օրինակը:

III.ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

24. Փաստաբանի օգնականն իր կարգավիճակը ձեռք է բերում պարզեցված ընթացակարգով՝ Պալատի խորհրդի կողմից սույն Կարգին համապատասխան արտոնագրվելու միջոցով:

25. Փաստաբանի օգնականի արտոնագիրը և վկայականն ունեն հերթական համար, որը որոշվում է ըստ օգնականի արտոնագրման ժամանակագրական հերթականությամբ: Վկայականը և արտոնագիրը տրամադրում է Պալատի նախագահը՝ փաստաբանի օգնականի արտոնագիր տրամադրելու մասին Պալատի խորհրդի որոշման կայացման պահից տասնհինգօրյա ժամկետում:

26. Փաստաբանի օգնական կարող է լինել միայն բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող ֆիզիկական անձը:

27. Փաստաբանի օգնական չի կարող լինել այն անձը, ով դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար և նրա դատվածությունը հանված կամ մարված չէ:

28. Փաստաբանի օգնականը չի հանդիսանում Պալատի անդամ: Փաստաբանի օգնականը չի մասնակցում Պալատի ընդհանուր ժողովին:

29. Փաստաբանի օգնականի կարգավիճակ ստանալու համար քաղաքացին Պալատի խորհրդին է ներկայացնում՝

1) Պալատի նախագահի կողմից հաստատված ձևի դիմում.
2) Պալատի նախագահի կողմից հաստատված ձևաթղթի վրա՝ ղեկավար փաստաբանի գրավոր համաձայնություն.
3) բարձրագույն իրավաբանական կրթության վերաբերյալ դիպլոմի պատճեն.
4) անձնագրի պատճեն.
5) երկու հատ 3x4 լուսանկար.
6) մուտքի վճարը կատարելու փաստը հաստատող ապացույց, բացառությամբ «փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու» կարգով նախատեսված արտոնության դեպքերի:

30. Պալատի խորհուրդը ներկայացված դիմումի և փաստաթղթերի հիման վրա կայացնում է որոշում փաստաբանի օգնականի արտոնագիր տրամադրելու կամ դիմումը մերժելու մասին: Փաստաբանի օգնականի արտոնագիր տրամադրելու մասին Պալատի խորհրդի որոշումը հիմք է հանդիսանում փաստաբանի օգնականին փաստաբանների օգնականների ցուցակում ընդգրկելու համար:

31. Փաստաբանի օգնականի արտոնագիրը տրամադրվում է մեկ տարի ժամկետով:

32. Փաստաբանի օգնականի արտոնագրի ժամկետը կարող է երկարաձգվել մեկ տարի ժամկետով՝ փաստաբանի օգնականի կողմից արտոնագրի գործողության

ժամկետը լրանալուց առնվազն 5 (հինգ) օր առաջ արտոնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին դիմում և ղեկավար փաստաբանի գրավոր համաձայնությունը ներկայացնելու դեպքում: Սույն կետով նախատեսված ժամկետը չպահպանելու դեպքում փաստաբանի օգնականի արտոնագրի գործողությունը երկարաձգելու մասին դիմում ներկայացնելիս փաստաբանի օգնականը պարտավոր է ընդհանուր կարգով ներկայացնել սույն կարգի 29-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում՝ վճարել փաստաբանի օգնականի մուտքի վճարը:

33. Փաստաբանի օգնականի կարգավիճակը իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքային ստաժի հաշվարկման հիմք չէ, բացառությամբ, երբ փաստաբանի օգնականն իր ղեկավար փաստաբանի (փաստաբանական կազմակերպության) հետ համագործակցում է աշխատանքային պայմանագրի հիման վրա:

34. Փաստաբանը կարող է միաժամանակ ունենալ մեկից ավելի օգնականներ:

35. Միևնույն անձը կարող է լինել միայն մեկ փաստաբանի օգնական:

IV.ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

36. Փաստաբանի օգնականի արտոնագրի դադարեցումը կամ կասեցումը իրականացվում է «Փաստաբանության մասին» օրենքի 36-րդ և 38-րդ հոդվածներով նախատեսված կարգով և դեպքերում:

37. Փաստաբանի օգնականի կողմից փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու պահից փաստաբանի օգնականի արտոնագիրը համարվում է ուժը կորցրած:

38. Փաստաբանի օգնականի արտոնագրի գործողության ժամկետը լրանալու պահից արտոնագիրը համարվում է ուժը կորցրած, բացառությամբ այն դեպքի, երբ սույն Կարգին համապատասխան ներկայացվել է արտոնագրի ժամկետը երկարաձգելու մասին դիմում:

39. Այն դեպքում, երբ փաստաբանի օգնականի ղեկավար փաստաբանը գրավոր դիմում է Պալատի խորհրդին՝ օգնականից հրաժարվելու վերաբերյալ, ապա Պալատի խորհուրդը պարտավոր է փաստաբանի օգնականին գրավոր նախազգուշացնելու պահից տասնհինգօրյա ժամկետը լրանալուց հետո ուժը կորցրած ճանաչել փաստաբանի օգնական արտոնագրի գործողությունը, բացառությամբ, երբ փաստաբանի օգնականն այդ ժամկետում կներկայացնի այլ ղեկավար փաստաբանի գրավոր համաձայնություն:

40. Փաստաբանի օգնականը կարող է դիմել Պալատի խորհրդին իր ղեկավար փաստաբանին այլ ղեկավար փաստաբանով փոխարինելու համար: Սույն կետում նշված դեպքում փաստաբանի օգնականը պարտավոր է ներկայացնել առաջարկվող ղեկավար փաստաբանի գրավոր համաձայնությունը:

41. Փաստաբանի օգնականի ղեկավարին փոխարինելու մասին որոշումը կայացնում է Պալատի խորհուրդը: Պալատի խորհրդի որոշման հիման վրա Պալատի աշխատակազմի ղեկավարը փաստաբանների օգնականների ցուցակում կատարում է համապատասխան փոփոխություն:

V. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ (ՎԿԱՅԱԿԱՆԸ)

42. Արտոնագիրը (վկայկանը) ունի հերթական համար, որը հետագայում չի կարող փոփոխվել:

43. Արտոնագրի հերթական համարը տրամադրվում է այբբենական կարգով՝ հավակնորդների ազգանվան հերթականությամբ:

44. Արտոնագիրը տպագրվում է A5 ձևաչափի անթափանց թղթի վրա՝ 148 մմ լայնությամբ և 210 մմ երկարությամբ:

45. Արտոնագիրը պարունակում է հետևյալ տեղեկությունները

1) Պալատի խորհրդանիշը,
2) Պալատի լրիվ անվանումը,
3) արտոնագիր վկայականի հերթական համարը,
4) փաստաբանի օգնականի անունը, ազգանունը և փաստաբանի անունը, ազգանունը և արտոնագրի համարը:
5) տրման ժամանակահատվածը,
6) տրման ամսաթիվը,
7) Պալատի նախագահի ստորագրությունը,
8) փաստաբանի օգնականի լուսանկարը՝ փակցված աջ անկյունում
9) Պալատի կնիքը, որը դրվում է այնպես, որ կիսով չափ ընդգրկի նաև լուսանկարը:

46. Արտոնագրի մեջ նշված տեղեկությունները գրառվում են հայերեն լեզվով:

* * *